«Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ
Երևան, Դուրյան 35/8 | Հեռ. 012 22 92 90 | Էլ. Հասցե՝ artsakh-culturalcentre@mail.ru

N 07 «11» մարտի, 2025 թ.

Լոռու մարզի մարզպետ Արամ Ղազարյանին

Հարգելի՛ պարոն Ղազարյան

Համաձայն ‹‹Տեղեկատվական ազատության մասին›› ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք մեզ տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե ՀՀ Լոռու մարզից վերջին երկու տարում քանի երեխա է ընդունվել Ռոմանոս Մելիքյանի անվան Երևանի պետական երաժշտական քոլեջ և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա:

Նշենք նաև, որ ‹‹Տեղեկատվական ազատության մասին›› ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պատրաստ ենք տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ ենք:

‹‹Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն›› ՀԿ նախագահ ***Ա. Մարգարյան***